

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ

(ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության
45-ամյակի առթիվ)



Լրացավ ճանաչված պատմաբան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան 70 տարին:

Պ. Հ. Հովհաննիսյանը ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լենինական (այժմ Գյումրի) քաղաքում, Երզնկայից գաղթած ավանդապահ հայ ընտանիքում:

1951-1961 թթ. սովորել է տեղի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում: Բարձր առաջադիմությամբ ավարտելով այն՝ 1962 թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Երրորդ կուրսից զորակոչվել է խորհրդային բանակ և ծառայել ռազմաօդային ուժերում:

1967-1970 թթ. շարունակել է ուսումնառությունը ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1970 թ. ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան և պրոֆեսոր Ս. Պողոսյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանել «Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում» թեկնածուական ատենախոսությունը:

1975 թվականից առ այսօր աշխատում է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնում, նախ որպես կաբինետի վարիչ, ապա դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 2013 թվականից առ այսօր Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար է:

Նա դասավանդել է նաև Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն դասընթացներում (1992-1993 թթ.), Սևանի Վազգենյան հոգևոր դպրոցում (1995-1999 թթ.), իսկ 1999 թվականից առ այսօր՝ համատեղությամբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (Աստվածաբանական համալսարան):

Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետներում Հովհաննիսյանը դասավանդում է «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի ընդհանուր դասընթաց, Հայկական գաղթավայրերի պատմություն, Սփյուռքի պատմություն, Աղբյուրագիտություն, Հայագիտության պատմություն և մի շարք հատուկ դասընթացներ:

Մանկավարժական աշխատանքը զուգակցվում է գիտական-ստեղծագործական բեղուն աշխատանքներով: Գիտական հետաքրքրությունները վերաբերում են հին ու միջնադարյան Հայաստանի մշակութային ու քաղաքական պատմությանը, աղբյուրագիտությանն ու պատմագրությանը, հայկական գաղթավայրերի, Հայկական հարցի և Սփյուռքի պատմության խնդիրներին: Նա 400-ից ավելի տպագիր աշխատանքների՝ գրքեր, հոդվածներ, ժողովածուներ, ակնարկներ հեղինակ է: Նրա խմբագրությամբ լույս են տեսել 80-ից ավելի գիտական աշխատանքներ: Առավելապես հայտնի են նրա աշխատակցությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» (հատ. 1-ին, 1981, 2007, հատ. 2-րդ, 2011), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» տեղեկատու-պատկերագիրքը (2001), «Հայ եկեղեցու հանրագիտարան» պրակ Ա (2008), «Նշանավոր ճեմարանականներ» (հատ. 1-ին և 2-րդ, 2005, 2009) :

Պ. Հ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ ու խմբագրությամբ են լույս տեսել Ավետիս Պերպերյանի «Պատմություն Հայոց» աշխատությունը (2009), Աշոտ Հովհաննիսյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ»-ը (2007 թ.), Նիկողայոս Ադոնցի «Հայկական հարց» (1996), ինչպես նաև «Երկեր»-ի Ա-Զ հատորները (2006-2012), ակադ. Հ. Հ. Մանանդյանի Երկերի 7-րդ և 8-րդ հատորները (2010, 2011), Կ. Տեր-Մկրտչյանի «Հայոց եկեղեցու պատմություն» (2012) դասագիրքը և այլն:

Պ. Հովհաննիսյանը լուրջ ներդրում ունի մատենագիտական գրականության բնագավառում. հատկապես նշելի են «Հայկական հարց. հայերի ցեղասպանությունը» ոռւսերեն գրականության մատենագիտությունը, «Մովսես Խորենացի. մատենագիտությունը» ստվարածավալ աշխատությունը (2013): Այստեղ Մովսես Խորենացու երկասիրությունների մատենագիտությունից բացի, տեղ են գտել նաև պատմահոր մասին հայերեն և օտար լեզուներով լույս տեսած գրքերն ու հոդվածները (շուրջ 4000 միավոր):

Պ. Հովհաննիսյանը համահեղինակներից և խմբագիրներից է «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» բուհական ձեռնարկի (2000, 2012), հանրակրթական դպրոցի 5-10-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքի (2002-2013), հանրակրթական դպրոցի 6-րդ և 7-րդ դասարանների, ինչպես նաև ավագ դպրոցի 10-րդ դասարանի «Հայոց պատմություն» դասագրքերի:

Նա գործում մասնակցություն ունի ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն բազմահատորյակի 2-րդ և 3-րդ հատորների, «Հայկական սովետական հանրագիտարան», «Հայկական համառոտ հանրագիտարան», «Հայկական հարց», «Քրիստոնյա Հայաստան», «Ո՞վ ով է» հանրագիտարանների ստեղծմանը:

Մասնակցել է միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովների և կոնֆերանսների (Երևան, Մոսկվա, Բեյրութ, Սոֆիա, Մոնպելիե, Սոչի և այլուր): Գիտամանկավարժական բեղուն գործունեության համար արժանացել է Հայոց եկեղեցու բարձրագույն «Սուրբ Սահակ Պարթև և Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (2004), «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ» կոչմանը (2009), կառավարական բազմաթիվ շնորհակալագրերի ու պատվոգրերի:

Ցանկանք մեծարգո հոբելյարին երկար տարիների կյանք, առողջություն, բեղուն գրիչ, նոր աշխատություններ ի փառս հայ պատմագիտության:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ. Գ. Մինասյան